«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Միավորային և ձևավորող գնահատումների, ձևերի, տեսակների համեմատում

Առարկա՝ Հայոց լեզու և գրական.

Ուսուցիչ՝ Հարությունյան Սուսաննա

Դպրոց՝ Երևանի Վահան Տերյանի անվան թիվ 60 դպրոց

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

2023

Բովանդակություն

Ներածություն……3

Ինչ է ձևավորող գնահատումը…….5

Ձևավորող գնահատման բաղադրիչը……8

Ձևավորող գնահատման քայլաշարը…… 9

Գնահատման գործիքներ ……..12

Ձևավորող գնահատման հնարներից……..…13

Ինքնագնահատում……14

Եզրակացություն……..16

Օգտագործված գրականության ցանկ……..……18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հանրակրթական դպրոցներում սովորողների գնահատումն իրականացվում է ՀՀ պետական և առարկայական չափորոշիչների հիման վրա:Գաղտնիք չէ, որ հիշյալ փաստաթուղթը սահմանում է սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերման մակարդակը:Չափորոշիչները շեշտադրում են սովորողների նկարագրի և բարոյական որակների, արժեքային համակարգի ձևավորումը և շարունակական կատարելագործումը:

Գնահատման համակարգը խթանում է սովորողների ուսումնառության գործընթացը:

Առհասարակ, ո՞րն է գնահատման նպատակը:

Կատարելագործել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, անձնային աճը, ուսումնական գործընթացը և վերահսկել ուսման որակը՝ խթանելով սովորողի ներուժի առավելագույն զարգացումը: Գնահատումը՝

- թույլ է տալիս մշտապես դիտարկել սովորողի ուսումնական գործունեությունը, պարբերաբար ապահովել հետադարձ կապը և արձանագրել ձեռքբերումները,
- խթանել առարկայի խորը ընկալումը իրական կյանքի համատեքստում իրականացվող հետազոտությունների միջոցով,
- խթանել քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացումը,
- հնարավորություն է տալիս սովորողին առարկայական հմտությունները կիրառել միջառարկայական կապեր ստեղծելիս և անհատական նախագիծ իրականացնելիս,
- ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, համայնքին, նաև վերադաս մարմիններին տրամադրում է լիարժեք և հավաստի տեղեկություն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի մասին,

- ծնողներին տրամադրում է հիմնավորված տեղեկություն յուրաքանչյուր սովորողի ուսումնառության որակի, ձեռքբերումների և առաջընթացի մասին,
- հնարավորություն է տալիս դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը:

Սույն աշխատանքը Գնահատման համակարգի ուսումնասիրման մի փորձ է, որի առաջին գլխում խոսվում է ՀՀ Հանրակրթական պետական նոր չափորոշչով արդյունավետ գնահատում իրականացնելու մասին:Ներկայացվում է, թե ինչ համակարգից է այն կազմված:

Երկրորդ գլխում տրված են ձևավորող գնահատման բնութագրումները, նպատակներն ու վերջնարդյունքները:

Ձևավորող գնահատման գործիքները «Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» առարկաների դասերին ներկայացնելու փորձ է արվում երրորդ գլխում:

ԻՆՉ Է ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ըստ Հանրակրթության պետական չափորոշչի՝ « Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման »[1]:

Ինչպես նաև «Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) և ձևավորող (ուսուցանող) ձևերով» [2]:

Գնահատման վերաբերյալ ՀՊՉ-ով առաջարկվում են հետևյալ էական փոփոխությունները, որոնք համահունչ են կարողունակահեն համակարգին:

«Քանակական միավորային գնահատման համար կիրառվում է 10-միավորային սանդղակ, որտեղ որևէ թիվ անբավարար չի համարվում, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ »[3]:

Համաձայն այս դրույթի՝ բոլոր գնահատականները համարվելու են դրական և բնութագրելու են սովորողի կողմից որոշակի ձեռքբերում:Այս փոփոխությունը կարող է լուծել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գնահատման հետ կապված նախկինում առկա մի շարք խնդիրներ:

Հաջորդ էական փոփոխությունն ամրագրված է ՀՊՉ 41 կետում՝ « Ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը»4:

Մյուս փոփոխությունն արտահայտված է 44 կետում՝ « 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի 1-ին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում:

[1] ՀՊՉ, IX, կետ 37:

[2] ՀՊՉ, IX, կետ 38:

[3] ՀՊՉ, IX, կետ 39:

4 ՀՊՉ, IX, կետ 41:

Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ, որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանված կարգի»[1]:

Մինչդեռ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը կարող է իրականացվել «ըստ ԱՈԻՊ-ի՝ 10-միավորային սանդղակով»[2]:

Ահա՝ ինչպիսի կառուցվածք ունի Գնահատման համակարգը:

---

[1] ՀՊՉ, IX, կետ 45:

[2] ՀՊՉ, IX, կետ 53:


Գնահատման համակարգ
Գնահատման եղանակներ
Ընթացիկ գնահատում
Ամփոփիչ գնահատում
Գնահատման ձևեր
Ձևավորող գնահատում
Միավորային գնահատում
Բնութագրող
Գնահատման տեսակներ
• բանավոր հարցում
• գրավոր աշխատանք(էսսե, շարադրություն, թելադրություն, թեստ)
• գործնական աշխատանք
• ուսումնական նախագիծ
• թեմատիկ աշխատանք
• կիսամյակային ամփոփիչ աշխատանք

Ձևավորող գնահատումը՝

- ուսուցչին հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները, դժվարությունները:
- ապահովում է հետադարձ կապն ուսումնական գործընթացում, որի արդյունքների հիման վրա իրականացվում են աշխատանքներ յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի բարելավման ուղղությամբ:
- կարող է իրականացվել թեստերի, բանավոր հարցումների, գործնական, տնային աշխատանքների միջոցով:

Ձևավորող գնահատման ժամանակ օգտագործվում են սովորողի առաջընթացը բնութագրող որակումներ, վերլուծություններև մեկնաբանություններ:

Այդուհանդերձ, ձևավորող գնահատման կիրառման հետ կապված կան թյուր պատկերացումներ:Փորձենք հասկանալ՝ որոնք են դրանք:

Մանկավարժները կարող են մտածել, որ մինչ այժմ իրենց ունեցածն էլ վատը չէ:Հատկապես, որ բավարար պատկերացում չունեն, թե ինչ է ձևավորող գնահատումը:Բացի այդ, կարծում են, որ ծանրաբեռնված են, և ժամանակն ու ջանքերը չեն բավականացնի:Դժվար վերահսկելի է, և չի խթանվում մրցակցությունն ու սովորողների մոտիվացիան:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Կարևոր է, որ փևավորող գնահատում իրականացնող ուսուցիչը կարողանա ապահովել սովորողների գործուն մասնակցությունը սեփական ուսումնառությանը,

կարողանա խթանել սովորողների մոտիվացիան, կիրառի ինքնագնահատման և փոխադարձ գնահատման գործիքներ, որոնց ընթացքում կապահովի սովորողների ուսումնառության գործընթացի բարելավումը:

Բոլոր բաղադրիչների կիրառման պարագայում անխուսափելի է ուսումնառության գործընթացի բարելավումը և երեխաների մոտիվացիան:



ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՅԼԱՇԱՐԸ

Ձևավորող գնահատման քայլաշարը միշտ պետք է սկսել նախնական հայտորոշմամբ:Պետք է պարզել, թե որտեղ է գտնվում սովորողը, իմացության, գիտելիքների և հմտությունների որ մակարդակում է, թե որտեղից է պետք սկսել ուսումնառության գործընթացը:Այնուհետև տարբեր փուլերում իրականացվում են ընթացիկ հայտորոշումներ հետադարձ կապի, փոքրիկ թեստերի, տարբեր ձևերով

կարճ հարցումների միջոցով պարզելու համար, թե ինչ բացթողումներ ու ձեռքբերումներ ունեն սովորողները, թե ինչ ուղղությամբ է պետք բարելավել ուսուցման և ուսումնառության գործընթացը:

Ի՞նչ է պետք փոխել, որպեսզի Ձևավորող գնահատումը հաջողվի, արդյունավետ դառնա:

Մանկավարժների և ծնողների ընկալումը Ձևավորող գնահատման վերաբերյալ

Պետք է փարատվեն բոլոր թյուր պատկերացումները, պետք է զարգացվի ուսուցիչների՝ նյութեր կազմելու և կիրառելու մոտիվացիան, կարողությունը, պետք է փոխվի սովորողների վերաբերմունքը Ձևավորող գնահատման հանդեպ և ավելացվի, մեծացվի նրանց ներգրավվածությունը, պետք է գիտակցվի թիմային և համագործակցային միջավայրի առավելությունը, պետք է ընտրվեն ոչ միավորային գնահատման արդյունքների ներկայացման արդյունավետ ձևեր: Բարելավված ուսուցում/



հայտորոշում

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԵՎ ՉԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ

ՄԻԱՎՈՐԱՅԻՆ	ՉԵՎԱՎՈՐՈՂ
1. Իրականացվում է ուսուցման փուլի ավարտին:	1. Իրականացվում է ուսուցման ողջ ընթացքում:
2.Գնահատումն իրականացնում է բացառապես ուսուցիչը:	2. Գնահատմանը մասնակցում են թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողը:
3.Գնահատման արդյունքում տրվում է առաջադիմ. թերթիկ:	3. Գնահատման արդյունքում տրվում է սովորողի բնութագիրը:
4. Ամրագրում է ուսուցման փուլի արդյունքը:	4. Բացահայտում է սովորողի ուժեղ և թույլ կողմերը, բարելավում ուսուցման գործընթացը:
5. Գնահատվում է նույն հաստատուն՝ 1-10 սանդղակով:	5. Գնահատումն իրականացվում է ՁԳ տարբեր գործիքներով:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ինչպես գիտենք, ձեւավորող գնահատումը ուսումնական գործընթացում ուսուցիչների եւ սովորողների գործունեության ճշգրտումն ու շտկումն է՝ հիմնվելով ուսումնառության ընթացիկ արդյունքների վրա: Գործունեության շտկումը ենթադրում է ուսուցչի եւ սովորողների առջեւ դրված ուսումնական խնդիրների համատեղ լուծում՝ արդյունքները բարելավելու նպատակով:

Ձեւավորող գնահատում իրականացնելիս անհրաժեշտ է վերհանել սովորողների կարիքները.

• Յուրացրե՞լ են թեման, թե՞ ոչ:

• Կարելի՞ է արդյոք անցնել մյուս բաժինն ուսումնասիրելուն:

• Ո՞վ ունի լրացուցիչ օգնության կարիք:

• Ի՞նչը պետք է փոխել կամ վերանայել դասի պլանավորման եւ դասավանդման մեթոդիկայում:

Ձեւավորող գնահատման գործիքները բազմազան են, եւ ցանկալի արդյունքի հասնելու համար պետք է կիրառել նպատակային եւ հետեւողականորեն: Կարելի է սկսել ձեւավորող գնահատման ոչ ժամանակատար, ամենօրյա գործածության համար հարմար գաղափարներից:

Գործիք 1. Արդյունավետ սկիզբ եւ ավարտ

Կարեւոր է դասի համար ապահովել արդյունավետ սկիզբ եւ ավարտ՝ օգտագործելով առաջին եւ վերջին 5 րոպեները: Տալիս ենք հարցեր անցած թեմայից կամ կիրառում կարճ

հարցաշար: Ընդ որում, եթե էլեկտրոնային ռեսուրսները բավարար չեն, կարելի է խնդրել

սովորողներին փոքրիկ թղթիկների վրա գրել յուրացրած եւ ոչ այնքան լավ յուրացրած հարցերը, գաղափարները եւ գցել երկու տարբերակված արկղիկների մեջ: Սա կօգնի հստակեցնել թեմայի յուրացման ամբողջական պատկերը:

Իսկ եթե հնարավորություն կա օգտագործելու **Google Forms**, **Poll Everywhere**, **Edulastic** հարթակները, ժամանակի մեծ տնտեսում կլինի:

Դասի ավարտին սովորողները կարող են «3-2-1» մեթոդով անդրադառնալ իրենց աշխատանքին եւ ձեռքբերումներին, նշելով՝ 3 բան, որ յուրացրել են, 2 բան, որոնց մասին

կուզեին ավելին իմանալ եւ 1 բան, որ չեն հասկացել:

Ապա սովորողները կարող են շրջել սենյակում եւ ծանոթանալ միմյանց նշումներին, լրացումներ կատարել իրենց թերթիկներում:

Կարելի է նաեւ սովորողներին առաջարկել ինքնագնահատման հարց՝ «Ի՞նչը ես այլ կերպ կանեի հաջորդ դասին»:

Գործիք 2. Նվազ ազդեցություն ունեցող թեստեր

Թեստերի կիրառումը արագ հետադարձ կապի հնարավորություն է տալիս եւ օգնում է լավ հասկանալ սովորողների կողմից հիմնական եզրույթների, տվյալների եւ գաղափարների յուրացումը:

Կան հավելվածներ, օրինակ՝ **Zipgrade-ը** (https://www.zipgrade.com/), որոնց օգնությամբ կարելի է արագ դուրս բերել թեստային թերթիկները եւ կիրառել: Նվազ ազդեցության թեստերի կիրառումը հարմար է նրանով, որ դրանց արդյուքները չեն ազդում կիսամյակի գնահատականի ձեւավորման վրա, այլ յուրաքանչյուր սովորողի համար բացահայտում են, թե թեմայի իմացության ինչ մակարդակ ունեն տվյալ պահին:

ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՆԱՐՆԵՐԻՑ

Ձևավորող գնահատումն օգնում է ուսուցչին ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իր և սովորողների քայլերը: Ուսուցչի քայլերի ճշգրտումը և

զարգացնող առաջադրանքների կիրառումը օգնում են բարելավել սովորողների ձեռքբերումները:

Դասի յուրաքանչյուր փուլում ուսուցիչը ժամանակ առ ժամանակ հարցերի, դիտարկումների միջոցով պետք է ստուգի, թե արդյոք սովորողները չեն շեղվել նախատեսված նպատակներին տանող ուղուց:

Ստորև ներկայացված են մի քանի հնարներ, որոնք կօգնեն սովորողներին և ուսուցիչներին՝ ձեռքբերումները, դժվարությունները ու բացթողումները բացահայտելու, անհրաժեշտ ճշգրտումներ անելու, առաջադրանքները հնարավորինս հասկանալի դարձնելու և անսխալ կատարելու համար: Այս հնարները լավ միջոց են նաև սովորողների ինքնուրույն աշխատանքը խթանելու, ինչպես նաև կազմակերպելու ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

ԻՆՔՆԱԳՆԱՀՈՒՄ

Հանրակրթության պետական նոր չափորոշիչն ունի կարողունակահեն (կոմպետենտահեն) կառուցվածք, և 8 հիմնական կարողունակություններից է սովորել սովորելու կարողունակությունը. «Սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն»:

Այս կարողունակությունը արտացոլված է տարբեր ուսումնական առարկաների վերջնարդյունքներում: Ներկայացնենք մի քանի օրինակներ տարբեր առարկաների

վերջնարդյունքներից:

Վերլուծի իր ուսումնառության գործընթացը, սեփական գործողություններն ու արարքները և ինքնուրույն կամ օգնությամբ մշակի բարելավման քայլեր (Այրենի):

Նշել սեփական կարողություններն ու հնարավորությունները, ինքնադրսևորվել (ԵՇԱ):

Քննադատաբար վերաբերվել իր և ուրիշների ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծել հասանելի տեղեկությունը, ճանաչել, կարդալ և գնահատել փաստարկները (Ֆիզիկա):

Տարբեր ուսումնական առարկաների համար սահմանված վերջնարդյունքներին հասնելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել համապատասխան մանկավարժական իրավիճակներ, որոնց մեջ հայտնվող սովորողները հնարավորություն կունենան դրսևորելու, ինչպես նաև զարգացնելու որոշակի կարողություններ՝ վերլուծելու, պլանավորելու, ինքնարտահայտվելու, գնահատելու, համադրելու և այլն, և որակներ՝ նպատակասլացություն, համբերատարություն, հանդուրժողականություն և այլն:

Սովորողի՝ ինքնավերլուծության, ինքնաճանաչման և ինքնագնահատման կարողությունների խթանմանը և ինքնազարգացմանը էապես նպաստում են նաև ձևավորող գնահատման գործիքները, մասնավորապես՝ ինքնագնահատումը:

Ինքնագնահատում իրականացնելիս սովորողը ոչ թե զուտ մեխանիկական աշխատանք է իրականացնում, այլ գործի է դնում իմացական գործընթացները, ինչպես նաև հիմքեր է ստեղծում ստեղծագործական մտածողության համար: Ինքնագնահատման հիմքը կազմում է վերլուծությունը (ռեֆլեքսիա), որը վերաբերում է ոչ միայն արդյունքներին, այլև գործընթացքին, ներդրած ջանքերին, վերաբերմունքին և այլն, իսկ ինքնագնահատման համար անհրաժեշտ է սանդղակ՝ հստակ չափանիշներով:

Ներկայացնենք ինքնագնահատման օրինակ մայրենիի որևէ թեմայի շրջանակում՝ «Գնահատման անիվ» գործիքն ուղղելով առարկայական վերջարդյունքների ապահովմանը:

Ինչպե՞ս ես գնահատում թեմայի ուսումնասիրումը: Գնահատի՛ր՝ յուրաքանչյուր գույնի մեջ գրելով «Շատ լավ,» «Լավ», «Ոչ այնքան լավ», «Վատ» ***բառերից մեկը:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով գնահատման վերաբերյալ այս ուսումնասիրությունը՝ հարկ է նշել, որ «Մայրենի», «Հայոց լեզու» , «Գրականություն» առարկաների դասերին գնահատման գործիքներին ծանոթանալու, դրանք մշակելու և կիրառելու մի փորձ է, որը արդյունավետ դասավանդման միջոցով կբարելավի սովորողների ուսումնառությունը:

Ներկայացվեց, որ ձևավորող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված բացթողումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթացն է:

Նշվեց, որ ձևավորող գնահատման նպատակն է՝

- բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը,
- բացահայտել, վեր հանել ուսումնական նյութի յուրացման հետ կապված խնդիրները,
- սովորողին ուղղորդել տվյալ նյութը սովորելու, բացթողումները շտկելու անհրաժեշտության գիտակցմանը,
- ճշգրտել կիրառվող դասավանդման ռազմավարությունների և մեթոդների նպատակահարմարությունը:

Ձևավորող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում. սա անընդհատ իրականացվող գործընթաց է, քանի որ ուսուցանելու, գիտելիքներ և դրանց հիման վրա որոշակի կարողություններ ձևավորելու միտում ունի և չունի նիշային գնահատման նպատակ: Ձևավորող գնահատման նպատակով միջին դպրոցում «Մայրենի» , «Հայոց լեզու» , «Գրականություն» առարկաների դասերին կիրառվում են գործքիների հետևյալ տեսակները՝ յուրացման / ինքնուրույն աշխատանք, բանավոր ելույթ, կարճ ժամանակի համար նախատեսվող հայտորոշիչ թեստ, ուսուցանող ստուգում, ստուգող հարցաթերթ, բաց հարցերով քննարկում, խմբային/զույգային համագործակցային աշխատանքներ, գործնական աշխատանք, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, թղթապանակի բովանդակության գնահատում, հաշվետվության ներկայացում և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ Հանրակրթության պետական չափորոշիչ

2. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_22.html

3. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_21.html

4. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_83.html

5. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_31.html

6. https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page_38.html